ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024թ.

(ստորագրություն)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- Էթիկան արժեքների, ավանդույթների, համոզմունքների, վարքագծի նորմերի և կանոնների ամբողջություն է, որի իմացությունը պարտադիր է ԵՊՏՔ-ի յուրաքանչյուր աշխատակցի և ուսանողի համար:
- Էթիկայի կանոնակարգի հիմքում ԵՊՏՔ-ի անձնակազմի կողմից ընդունված ակադեմիական արժեքներն են, որոնք սահմանում են ԵՊՏՔ աշխատակիցների և ուսանողների համակեցության ընդհանուր նորմերը Քոլեջի տարածքում և դրանց խախտման դեպքում կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը:
- Կանոնակարգը Քոլեջում բարոյական վարքի ուղեցույց է, որին պարտավոր են հետևյալ բոլորը:

Կանոնակարգի նպատակն է՝

- ամրագրել էթիկայի կարևորագույն սկզբունքները և նորմերը, որոնցով պետք է առաջնորդվեն Քոլեջի աշխատակազմը և ուսանողները,
- սահմանել աշխատակազմի և ուսանողների, ինչպես նաև շահագրգիռ մարմինների միջև փոխհամագործակցության վարքագծի դրսևորման չափանիշները,
- խթանել միասնական էթիկայի սկզբունքներ և նորմեր՝ հիմնված բարձր էթիկական չափորոշիչների վրա՝ ստեղծելով և ապահովելով փոխադարձ վստահության և հարգանքի միջավայր:

Կանոնակարգի առանցքային հասկացությունները և սկզբունքները՝

- բարեվարքություն – Քոլեջում բոլորի վարքագիծը համահունչ է մի շարք դրական բարոյական և էթիկական սկզբունքներին ու կանոններին, որոնք հենվում են հիմնական բարոյական և էթիկական արժեքների վրա:
- ազնվություն – Քոլեջում բոլորը պետք է մշտապես խուսափեն ցանկացած խարդախությունից, ստախոսությունից, խաբեությունից, գողությունից, շորթումից կամ որևէ այլ անազնիվ արարքից,
- ճշմարտություն – Քոլեջում բոլորը պետք է ճշմարտությունն ասեն և չստեն հաղորդակցության ժամանակ,
- թափանցիկություն – այն պահանջում է ազատորեն հանրայնացնել ոչ միայն Քոլեջի՝ որպես կազմակերպության, այլև անհատների մասին տեղեկատվությունը:

- հարգանք այլոց հանդեպ – Քոլեջում պետք է ցուցաբերեն բոլոր կողմերի արժանապատվության, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ հարգանք:
- վստահություն – Քոլեջում բոլորը պետք է միանգամայն վստահ լինեն փոխադարձ ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցում,
- հաշվետվողականություն – Քոլեջում բոլորը պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ կատարելու համար, սեփական լիազորությունների նկատմամբ լինել հաշվետու և պատասխանատու, ստանձնած պարտականությունների կատարման ընթացքի վերաբերյալ պարբերաբար հանդես գալ հաշվետվությամբ,
- արդարացիություն – Քոլեջում բոլորը միմյանց նկատմամբ պետք է վարվեն անկողմնակալ, առանց խտրականության և անազնիվ դրսևորումների,
- հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն – Քոլեջում բոլորը պետք է պահպանեն կայունություն, հավասարություն և արդարություն՝ կրթական և սոցիալական արժեքների նկատմամբ, ինչպես նաև ճանաչեն այլոց իրավունքներն ու պարտականությունները: Քոլեջում արգելված է մարդուն ստորացնելու ցանկացած դրսևորում: Քոլեջում պետք է կիրառվի արդար և թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականություն և գործելակերպ՝ կապված տարիքի, հաշմանդամության, գենդերային խտրականության, ռասայի, էթնիկ պատկանելիության, կրոնի և դավանանքի հետ:
- Որակյալ կրթություն – Քոլեջում բոլորը պետք է ընդունեն իրենց անվերապահ հանձնառությունը որակյալ կրթություն տրամադրելու հարցում:
- անձի կատարելագործում և համակարգերի բարելավում – Քոլեջում բոլորը պետք է ընդունեն մասնագիտական կրթության համակարգի շարունակական բարելավման գործում առավելագույն ներդրում կատարելու կարևորությունը:
- հրաժարում շահերի բախումից – անձնական օգուտով կամ շահով պայմանավորված որոշումների բացառում:
- պարտքի զգացում – սեփական բարոյական պատասխանատվության գիտակցում Քոլեջի, նրա հեղինակության նկատմամբ,

- պատիվ և արժանապատվություն – առաջնորդվել պատվով և արժանապատվությամբ, նշանակում է ցանկացած իրավիճակում ապրել բարոյական նկարագրին համապատասխան: Քոլեջի ղեկավարությունը պետք է վարի այնպիսի քաղաքականություն, Քոլեջում ներդնի սոցիալական պաշտպանվածության այնպիսի կառուցակարգեր, որոնք կապահովեն յուրաքանչյուր աշխատակցի, ուսումնառողի պատիվն ու արժանապատվությունը:
- բարեկրթության, գիտելիքի, փորձի և բարոյական նորմերի պահպանում միջանձնային, գործընկերային և պաշտոնական հարաբերություններում,
- Քոլեջի ժողովրդավարական ղեկավարում և կառավարում - ղեկավարման և կառավարման գործընթացների բոլոր շահառուների առավել ներգրավվածություն և կառավարում՝ բարոյականության հիմնական չափանիշներով: Քոլեջի ներսում հարաբերությունները կառուցվում են համերաշխության, փոխադարձ հարգանքի, աջակցության, համագործակցության, բարենպաստ հարաբերությունների, աշխատանքային մշակույթի կանոնների պահպանման վրա՝ արդյունավետ աշխատանքի և հանգստի ապահովման համար: Քոլեջում շեշտը դրվում է մարդկանց արժանապատվությունը, ֆիզիկական և մտավոր կարողությունները հարգելու վրա: